

Պաշտոն

Վարկային մասնագետ

Աշխատանքի սկիզբ

Հունվար, 2023

Աշխարհագրական տարածք՝ Մենք փնտրում ենք վարկային մասնագետներ Արարատի մարզ՝ ք. Մասիս, Արմավիրի մարզ՝ ք. Էջմիածին, Կոտայքի մարզ՝ ք. Աբովյան, Արմավիրի մարզ՝ ք. Մեծամոր, Շիրակի մարզ՝ Ազատան համայնք, Արագածոտնի մարզ՝ ք. Աշտարակ, Արարատի մարզ՝ ք. Արտաշատ տարածաշրջանների «ԲԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ մասնաճյուղերի համար:

Աշխատանքի նկարագրություն

- Հաճախորդների ներգրավում, Հաճախորդի տվյալների հավաքագրում, ֆինանսական խորհրդատվության և վարկավորման առաջարկների իրականացում:
- Հաճախորդների վճարունակության ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում ֆինանսական վերլուծության իրականացում:
- Ձևավորել և սպասարկել վարկային պորտֆել:
- Անմիջականորեն մասնակցել նոր Հաճախորդների ներգրավմանն ու սպասարկվող վարկային պորտֆելի տարածքային ու ծավալային ընդլայնման գործընթացին:
- Հաճախորդների վարկավորման առաջարկությունների պատրաստում ու դրա հետ կապված գործընթացի կազմակերպում, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում:
- Հաճախորդների վարկային փաթեթների կազմում և հետագա վարում,
- Իրականացնել վարկերի ընթացիկ սպասարկում և մոնիտորինգ, ինչպես նաև կազմակերպել այդ գործընթացի հետ կապված աշխատանքները:
- Իրականացնել Վարկային կազմակերպության ներքին կանոնակարգերով սահմանված և անմիջական ղեկավարի հանձնարարությամբ այլ առաջադրանքներ:

Պահանջվող որակավում

- Կառավարման, տնտեսագիտության կամ ֆինանսների բնագավառում, բարձրագույն կրթությունը կղիտարկվի առավելություն:
- Դիմորդները կարող են ունենալ բակալավրի կամ ավելի բարձր որակավորում:
- Որպես դիմորդներ կարող են հանդես գալ նաև ուսանողները, որը նրանց համար կլինի փորձ ձեռք բերելու լավագույն ճանապարհ:
- Աշխատանքային փորձը բանկային համակարգում կղիտվի որպես առավելություն:
- Ֆինանսական վերլուծության գիտելիքների առկայություն:
- Armsoft ծրագրի օգտվելու հմտությունները՝ որպես առավելություն:
- Թիմում աշխատելու ունակություն:
- ՀՀ գյուղական տարածքների վերաբերյալ իրազեկվածությունը ցանկալի է:
- Վարորդական իրավունքի առկայություն և մեքենա վարելու կարողություն:

Փոխհատուցում/աշխատավարձ. Պայմանական՝ կախված թեկնածուի մասնագիտական որակավորումից և համապատասխան աշխատանքային փորձից, հետագայում այն ունենալու է ուղիղ կապ սպասարկվող վարկային պորտֆելի ծավալից և որակից:

Խնդրում ենք, նկարով ինքնակենսագրականը (CV) ուղարկել hr@card.am էլեկտրոնային հասցեին՝ նամակի վերնագրի տողում հստակ նշելով պաշտոնի անվանումը և աշխատանքի իրականացման ցանկալի տարածաշրջանը, որին դիմում եք, կամ նկարով ինքնակենսագրականի (CV) թղթային տարբերակը նեկայացնել Ընկերության գլխամասային կամ տարածաշրջանային գրասենյակ: